ԿՈՄԻՏԱՍԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Չգիտես բառերով հյուսված, թե անբառ մի աղոթք է դա, արված բնության ու Աստծո առաջ, աստվածային կյանքի մի օրհներգություն, լույսի ու ցավի մի խորհրդավոր բուրվառ, որ խնկարկում է իր անուշահոտությունը՝ բացելով հանճարեղ մարդու բանաստեղծական աշխարհը:

Ու ամեն անգամ, երբ հաղորդվում ենք այդ պոեզիային, ծնվում է հրաշքը, իսկ հրաշքը հոգու աստվածային լույսն է:

Այո՛, Կոմիտասը աստվածային է:

Եվ այդ աստվածային հոգու տառապանքով է ստեղծվում այն, ինչ բանաստեղծական աշխարհ է կոչվում:

Հաճախ շատ տաղանդավոր մարդիկ, չկարողանալով ստեղծել իրենց աշխարհը, չեն հարատևում գրականության մեջ:

Այդ ինչպե՞ս եղավ, որ երգաստեղծ Կոմիտասը՝ մի քանի տասնյակ բանաստեղծությունների հեղինակը, մեր քնարերգության քարտեզի վրա նկատեց իրեն հատուկ անմեկնելի աշխարհը:

Կոմիտասյան մեղեդիների մեջ ցոլանում է ժողովրդի ոչ միայն զգացական աշխարհը, այլև հոգեբանությունը, ոգին:

Կոմիտաս - բանաստեղծը մեզ ծանոթ նույն անունն է, որ ոչ թե երգում է, այլ խոսում:

Նա խոսում է բնության, աստվածային սիրո, մարդկային սուրբ ու նվիրական զգացմունքների մասին:

Նրա բանաստեղծական խոսքը զերծ է ավելորդ զարդերից, չկա ոչ մի արհեստական հնչերանգ:

Երբ ընթերցում ենք նրա բանաստեղծությունները, զգում ենք կոմիտասյան ոճը՝ ծիածանվող գույների պես մաքուր, իրեն հատուկ խորհրդավոր ու բնական մտածելակերպով:

Կոմիտասը իր հոգու գույնով լսում է բնության աստվածային մեղեդին, որ լեցուն է կյանքի իմաստնությամբ.

Սևուկ ամպեր վար եկան
Օրան, օրան,
Սարի վրա շար եկան:
ծագեց առավոտ,
Պաղեց, սառավ օդ:
/ «Աշնան օր» /

Փաղաքշական ածանցի՝ «ուկ-ի շնորհիվ բանաստեղծությունը օժտել է նուրբ լիրիկականությամբ ու քնքշությամբ:

Մեր պոեզիան գիտե սևմութ ամպեր, թուխ ամպ, սև-սև ամպեր, բայց ահա անսպասելին սևուկ ամպեր, որը նորություն էր մեր պոեզիայի համար:

Այսպիսի բառերը ստեղծում են բազմազան հոգեվիճակներ, ընդգծում երևույթների այս կամ այն կողմը, առաջ են բերում որոշ դրություններ, որոնք լիրիկական բանաստեղծության արժեքը մեծացնում են:

Օրինակ՝ Իմ սրտիկի սերն ու քույր, սիրո խոցը՝
Ամպերի մեջ, որպես կայծակ սահեցավ:
/ «Աստված իմ» /

Կամ հետևյալ միանգամայն նույնատիպ ու նույն հուզականությամբ.

Մարմանդ-մարմանդ ու ադամանդ-ադամանդ
Արևը զարկեց պաղի սրտին
Եվ աստղուկները շարեց:
/ «Ձմեռնամուտ» /

Նման բառերով անվանում են փոքրիկ առարկները, ինչպես՝ թևիկ, աստղուկներ, ծառիկ, բունիկ, կաթնետունիկ, աչուկ և այլն:

Այս կարգի բառերով ոչ միայն առակներն են քնքշանում, այլև հատկանիշները և այդ մեղմ հուզականությունը տարածվում է գրեթե ամբողջ բանաստեղծության վրա:

Գարուն ցելավ ծաղկունիկ քոցերով,
Ամառն ելավ հասկունիկ ծոցերով,
Աշունն առավ խատուտիկ քարերով,
Ձմեռ պատավ պատուտիկ սառերով:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Կոմիտասի սիրային պոեզիան:

Ո՞րտեղից է ծնվում այդ սերը:

Դժվար է միանգամից զգալ ու վերապրել այդ աստվածային գաղտնիքը: Երբ ակամայից ըմբոշխնում ենք Կոմիտասի «սուրբ սերը» որ ձուլված է բնությանը, զգում ենք տառապանքից ու կարոտից ծնված տարօրինակ, բայց խորունկ սիրո լույսը.

Ծաղիկ-ծաղիկ քեզ որոնել՝
Ամպի տակին՝ արևածագին շունչ առել,
Ջրի մոտին, կանաչ խոտին՝
Գլխիդ վերև ծիրան-գոտին փունջ արել:

Գիշերային երազի մեջ հնչում է կուսակրոն բանաստեղծի աստվածային սիրո խոստովանության մեղեդին, որ լուսավորում է սուրբ կանթեղի պես, բայց չի բոցավառվում:

Եվ այս գիշեր, իմ երազում, քեզ հետ մեկտեղ պարեցինք,
Սեր-ոգիներ սուրբ սեղանում մեղրամոմեր շարեցին
Ոսկի-արծաթ ամպի ծալեն նուրբ ու բարակ քող ճարեցինք
Ինձի-քեզի կարմիր-կանաչ սիրո շապիկ կարեցին:
/ «Իմ երազում» /

Ինչպես նկատում ենք, նուրբ զգացումների և ապրումների մթնոլորտը ստեղծվում է փոխաբերական մակդիրների բնական հաջորդականությամբ և անշուշտ ժողովրդախոսակցական հուզական բառերի ու դարձվածքների ընտրությամբ.

Ընտրված փոխաբերական մակդիրները հենց սկզբից շարժման մեջ են դնում բանաստեղծի ներազդող ու պոետիկ զգացումները, որոնք լցված են ջերմ ու համակող հույզերով:

Միջնադարյան տաղերի գեղեցիկ գույների խաղով է ստեղծվել «Վարդիկս» բանաստեղծությունը.

Խցիկիս մոտ ջուր եմ արել մարգ ու մարգ,
Վարդիկիս հոտ հուր էր դառել բարկ ու բարկ.
Ելա անհոգ սարերի գոգ շրջելու,
Սիրու ամպեր բոլորեցին թրջելու:

Մահիճիս քով հուր եմ վառել դողունի,
Վարդիկիս հով դուռ էր ճարել գողունի
Լանջես ի վեր սիրո շիթեր շաղելով՝
Երազ-հույզեր նվագեցին խաղալով:

Գիշեր գացավ՝ լուսին-լուսին հուսալի
Նոր օր բացավ՝ արևն ուսին լուսալի:

Մենավորի խցիկեն՝
Հուսո սարակ շավիղով
Աշխարհ մտա,
Վարդի բույրի գծիկեն՝
Հովի բարակ տավիղով՝
Քեզի գտա:

Կոմիտասի մոտ գրական ու խոսակցական լեզվի տարրերը ստանում են նորանոր նշանակություններ ու հուզարտահայտչական գույների հարստություն: Կան հին բառեր, իսկ ժողովրդական բառը, խոսքը կորցնում է իր ազգագրական գույնը՝ հնչելով նոր շեշտումով ու մեղեդիով:

Շուշան սիրտը դ մաքառեց տարի-տարի
Կյանքիդ արև-օրերում.
Սուսուն-սերը դ թափառեց արի-արի
Լանջիդ լուսին ձորերում...

Կոմիտասի համար գեղեցիկ համեմատությունների, չափազանցությունների լայն միջոց է «Սեր» հասկացությունը: Որքան էլ հանելուկային է բանաստեղծի աստվածային սիրո աշխարհը, սակայն այդ սրտմաշուկ զգացումները հեղեղի պես հոսուում են սովորական պարզախոս բառերից.

«Սուսուն-սերը դ թափառեց արի-արի
Լանջիդ լուսին ձորերում»:

«Ելա անհոգ սարերի գոգ շրջելու,
Սիրու ամպեր բոլորեցին թրջելու»:

«Եվ այս գիշեր, քո երազում, տեսել եմ ես, որ ես ու դու
Երես-երես ճանաչել ենք սիրո ծովում իրարու»:

«Հոգիս եկավ հովի պես,
Սերը սրտում ծովի պես»:

«Քո սուրբ սերը սար է դառել
Դալարագեղ, երկնածրար ու բեղուն»:

Խոսքի հուզարտահայտչական միջոցների շնորհիվ բանաստեղծությունները օժտվում են զանազան էմոցիոնալ գույներով:

Կոմիտասի բանաստեղծական խոսքը հարուստ է նաև բառական կրկնություններով: Սրանք ինչքան ժողովրդական են, նույնքան էլ գրա-

կան են և պայմանավորված չեն հատուկ գեղարվեստական խնդրով, արտահայտում են սիրո խոսքը իր էմոցիոնալ նրբությամբ ու քնքշությամբ:

Շրթունքներդ մանուշակ դալար-դալար
Սիրո գարուն զովանի,
Գանգուր հերդ անուշակ գալար-գալար
Համբույրներուն հովանի:
Սերդ սեր էր, ծագեցավ
Պատույտ-պատույտ դափնիների ճյուղերով,
Սիրտդ սիրտ էր, հագեցավ
Կապույտ-կապույտ բալասանի յուղերով:
/ «Շուշան սիրտ» /

Եվ այսպես, ստեղծվում են լիրիկական մեղմ, բայց խորը վշտի ու թախծի պատկերներ:

Այն ի՞նչ ամպ էր՝ աղոտ-աղոտ ծովեցավ,
Ու թուխ պատեց կապուտեց
Այն սև ամպ էր՝ մաղոտ-մաղոտ ցրվեցավ,
Ու պուխ կապեց, պատուտեց:

Բանաստեղծը խտացնում է գույները, պատկերավորությունը, մտցնում է նաև խոսքի բազմազանություն՝ կազմելով նոր բառեր:

Աչքի տակեն
Սրտիս ակով
Ծաղիկ-ծաղիկ ծիծաղեց,
Գոգի մարգեն
Բարակ զարկով
Գաղիկ-գաղիկ շաղ մաղեց:

Աղբեր քուրեն
Սառն-սառն աղբուրով
Տորոն-տորոն սեր փնջեց
Հուր աչերեն
Լուռ պաչերով
Որոն-որոն ներշնչեց:

Իրո՜ք, ամեն մի տողը բնաբան կարող է լինել Կոմիտասի նուրբ ու գողտրիկ ստեղծագործության համար: Մենք լսում ենք այդ հնչյունների լուսավոր հույզը, որ հղկում է մարդու սիրտը, մարդու վիշտը դարձնելով ավելի խորազգա, առավել մարդկային:

Կախարդվում ենք այդ աշխարհով և զարմանում, որ հանճարեղ Կոմիտասը, որ իր հոգում ուներ պահված բյուրեղի պես մաքուր ու գողտրիկ զգացումներ, զրկված էր այդ զգացումը վայելելու իրավունքից:

Եվ այստեղ դրամատիկ ու ողբերգական են հնչում Սևակի հետևյալ խոսքերը.

Ո՞վ էր այդ թաքուն-մեղավոր սիրո
Ահավոր դժբախտ երջանիկ տերը...

Ասա՛, վարդապե՜տ
Ո՞վ է քո սերը,
Բախտի պես թաքուն
Քո սիրո տերը...

Ով էր նրա թաքուն սիրո տերը: Եվ նա բանաստեղծի խոսքերով ասած, ոչինչ չուներ,

...Այլ ուներ լոկ քեզ - մի ամբողջ աշխարհ,
Եվ աղաչում էր, որ դու չլքես,
Դառնաս օրվա հա՜ց, և ոչ թե ... նշխար...

Կոմիտասը՝ այդ սուրբ ու նվիրական անունը, դարձավ տարերք և իր սրբացած հոգու լույսով ծուլվեց մեր աշխարհին, դարձավ մեր աշխարհը...